ՆՈՐ ԳՐՔԵՐ

Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ — «Հայ միջնադարյան պատմական ողբեր», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 2000, 244 էջ։

Ողբը իր բազմազան տեսակներով հայ հին և միջնադարյան գրավոր մշակույթի կարևոր ժանրերից է։ Ինչպես մեր մատենագրության շատ երևույթներ, այնպես էլ ողբերգության շատ հարցեր դեռևս բազմակողմանի ուսումնասիրության առարկա չեն դարձել։

Հայագիտությունը դեռ վաղուց ուշադրություն է դարձրել ողբերին, հրատարակվել են մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ, բայց դրանք կրել են պատմա-բանասիրական բնույթ։ Ողբերի գեղարվեստական արժեքը հետազոտողների տեսադաշտից գրեթե դուրս է մնացել։

Բանասեր Պ. Խաչատրյանն իր այս ուսումնասիրության մեջ մանրամասն դիտարկել է ողբերի զարգացման երկար ուղին, յուրաքանչյուր ողբ գնահատել է իբրև պատմական սկզբնաղբյուր, պարզաբանել նրանցից մի քանիսի հեղինակային պատկանելությունը, ինչպես նաև, հնարավորին չափ, լրացրել է ողբասացների կյանքի ու գործունեության պատկերը։ Վերջապես, հեղինակը ողբերգությունը դիտել է իր ամբողջության մեջ, վեր հանելով նրա գրական-գաղափարական արժեքը։

Գիրքը բաղկացած է երեք դրվագից։ Առաջին դրվագում տեղավորված են 14—15-րդ դարերի պատմաողբերը, երկրորդում՝ 16-րդ դարի պատմաողբը, իսկ երրորդում՝ 17-րդ դարի սկզբի պատմաողբը։ Աշխատությունը արժեքավոր է հայագիտությամբ զբաղվողների համար։

«Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը», կազմեց Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ — Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 1000, 640 էջ։

«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակները» շարքի Ա և Բ պրակների հրատարակումից հետո ներկա հատորով սկիզբ է դրվում նույն մատենաշարի «Կալվածագրեր» շարքի հրատարակությանը։

Այս պրակում ընդգրկված են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի առանձին թղթապանակներում պահվող *XIV—XVI* դարերի պարսկերեն, մասամբ նաև արաբերեն 27 արժեքավոր կալվածագրեր, որոնց մեծ մասը վերաբերում է միջնադարյան Հայաստանի մեծ ու փոքր վանքերին։ Հատորը պարունակում է այդ կալվածագրերի վերծանված բնագրերը հայերեն ու ռուսերեն թարգմանությամբ, տեքստաբանական ու պատմա-բանասիրական բնույթի ծանոթագրություններով և բնագրերում հանդիպող վարչա-տնտեսական, ագրարային տերմինների հարուստ բառարանով։

Աշխատության առաջաբանում քննության են առնված *XIV—XVII* դարերի ֆեոդալական հողատիրության ու ագրարային հարաբերությունների պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցեր։ Հատորում տեղավորված են նաև վերը նշված 27 կալվածագրերի լուսանկարներ։

Ա. ՍԱԼՄԱՍԼՅԱՆ — «Հայկական մատենագիտություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը 3000, 470 էջ:

Հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, ինչպես հայտնի է, սերտորեն առընչվում են Առաջավոր Ասիայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Արևելյան Եվրոպայի, Ապենինյան և Բալկանյան թերակղզիների շատ ժողովուրդների պատմության և մշակույթի հետ: Առանց հայ աղբյուրների գիտության դժվար է վերոհիշյալ երկրների պատմությունն ու մշակույթը հասկանալ: Այս հանգամանքից ելնելով, օտարազգի շատ գիտնականներ, դեռևս նոր դարերի սկզբներից, սկսեցին զբաղվել հայագիտությամբ:

Վերջերս Հայկական ՍՍՀ ԳԱ հիմնակազմ գրադարանի մատենագիտական բաժինը ձեռնամուխ է եղել օտար ափերում առաջացած հայագիտության լիակատար մատենագիտություն կազմելու գործին: Ա. Սալմասլյանի այս գիրքը դրա արդյունքն է, որի վրա հեղինակը աշխատել է շուրջ 25 տարի:

«Հայկական մատենագիտության» մեջ զետեղված են առավելապես ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով հրատարակված գործերի բիբլիոգրաֆիական տվյալները. մյուս լեզուներով հրատարակվածները համեմատաբար քիչ են: Այլ օտար լեզուներով՝ լեհերեն, չեխերեն, ռումիներեն, բուլղարերեն, ինչպես նաև ռուսերեն և հայերեն կշարունակի կազմել ակադեմիայի գրադարանի մատենագիտական բաժինը:

Մ. Խ. ՔՈԹԱՆՅԱՆ — «Գիտատեխնիկական առաջադիմությունը և նրա խթանումը», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 1000, 286 էջ:

Ներկա աշխատության մեջ բացահայտված է նյութական շահագրգռվածության սկզբունքի դերը հասարակական արտադրության զարգացման գործում ընդհանրապես, գիտատեխնիկական առաջադիմության արագացման գործում՝ մասնավորապես: Հետազոտությունը նվիրված է մեր երկրում գիտական գործունեության տնտեսական կողմի մի քանի հարցերին: Ուսումնասիրվում են նոր տեխնիկան մշակող օղակների (գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական, տեխնոլոգիական կազմակերպություններ) պլանավորման, աշխատանքի կազմակերպման, տնտեսական խթանման, գիտատեխնիկական աշխատողների նյութական խրախուսման հարցերը և նշվում դրանց բարելավման ուղիները: Քննարկվում են նաև գիտական հայտնագործությունների, գյուտերի հեղինակների ու ռացիոնալիզատորների նյութական խրախուսման հարցերը և կոնկրետ առաջարկություններ արվում դրանց հետագա բարելավման վերաբերյալ: